Միւս կողմէ, Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Երկուշաբթի օր յայտնած է, թէ կորիպային ռազմավարական պէնքերու կրճատումին առնչութեամբ Ուշիկներին հետ բանակցութիւնները ղեկավարութիւններ կը դիմագրաւեն, ինչ որ կապակցուած էր կարճաժամ, թէ մինչեւ Մայիսի վեհաժողովը կարելի պիտի ըլլայ համաձայնութիւն մը գոյացնել այդ զօով:

Ան ըսած է, թէ տարակարծութիւնները գլխաւորաբար կը վերաբերին ամերիկեան պնդումներուն, թէ կորիպային հաստատութիւնները գլխաւորաբար նկատի առնուին եւ ոչ անոնք՝ որոնք պահ դրուած են:

Նախագահներ Վլադիմիր Փութին եւ Ճորձ Պուշ խոստացած են իրենց 6000էն 7000ի միջեւ կորիպային ռազմավարական գլուխները կրճատել՝ անոնց թիւը 1500էն 2000ի իջեցնելով: Սակայն տարակարծութիւնները կը մնան ամերիկեան այն առաջարկներուն պատճառով, թէ կարգ մը գլուխներ կարելի է պահ դնել:

## ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

**ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը**

Ձեր ինքնաշարժին պէնզինին, մագնիսին, իւղին, ինչպէս նաեւ լուսալու համար, վճարումին հետ միաժամանակ ցերեկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեռով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

**ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ FUEL CARD-Ը**

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կերպովները.-

- ԱՏՏԻԼի գրասենեակ, Պուրճ Կամուտ
- Շ ա մ ա գ ա յ ի մ ի գրախանութ, Պուրճ Կամուտ
- Գրատուն Caravelle, Չալքա
- Գրատուն Sava, Այնձար
- Գրատուն Կոմիտաս, Պէյրուք
- Obelisk հաստատութիւն, Անթիլիաս

**3աւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 քիւիմ:**

Մագնիսի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 քիւերուն:

**ՎՐԺԷՔՎՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐԺ ՄԸ**

eurco  
ԿԸ ՍՏԱՆԱՔ  
ՉՐԻՕՐԵՆ

# ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԴԻ՝ ՀԱԿԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՐԵԼՈՒ ՄԵՂԱԴՐԱՆՔ

Վրաստանի խորհրդարանի պատգամաւոր Կուրամ Ծարածէ իր գործընկեր Վան Բայբուրդը մեղադրած է «հակապետական եւ դաւաճանական քաղաքականութիւն վարելու մէջ»: Ան յայտարարած է, որ Վ. Բայբուրդը դէմ է վրացերէնի վրաստանի պետական լեզուի կարգավիճակ շնորհելու մասին օրէնքի ընդունման, ինչպէս նաեւ դէմ է Ախալքալաքի ուսուսական գիւնդի կառուցման խարխախ փակման:

Իր հերթին, Վան Բայբուրդը յայտարարած է, որ իր ամբողջ կեանքին ընթացքին ծառայած է Վրաստանին, ինչպէս «...եւ՝ վրաստանի մէջ ապրող հայերու 99 առ հարիւրի շահութուն»: «Փրայմ Նիոլո» լրատու գործակալութեան տուած հարցազրոյցի մը մէջ Վան Բայբուրդը ըսած է, թէ կը պաշտպանէ պետական լեզուի մասին օրէնքի ընդունումը, սակայն, եթէ մէկ անգամէն գործի դրուի այդ օրէնքը, որ կ'ենթադրէ վրացերէնի գծով քննութիւն կատարել համապատասխան արտօնագրի յանձնումով, ապա Վրաստանի հայ, ազգայնաճանցի եւ յոյն քաղաքացիները պիտի չընտրուին իշխանութեան տեղական մարմիններուն մէջ եւ այդպիսով դուրս պիտի մնան երկրին քաղաքական կեանքէն:

Վան Բայբուրդը նաեւ յայտարարած է, որ ինք դէմ է Ախալքալաքի ուսուսական գիւնդի կառուցման փակման: Սակայն այդ ռազմակայանը կարելի է փակել միայն լայն ճամբանով, երբ լուծուած կ'ըլլան Զաւարթի հայ բնակչութեան զոնէ գլխաւոր ընկերային-տնտեսական հարցերը:

## ՔՈԶԱՐԵԱՆ - ԶԻՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊՈՒՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան 6 Մարտին տեսակցութիւն մը ունեցած է Հայաստանի մէջ Չինաստանի դեսպան Չոու Չոաոչիւնի հետ, որ կ'աւարտէ իր դիւանագիտական առաքելութիւնը Հայաստանի մէջ:

Հանդիպման ընթացքին Չինաստանի դեսպանը նշած է, որ Հայաստանի հետ յարաբերութիւններու զարգացումը Չինաստանի կառավարութեան ուշադրութեան կեդրոնը կը դառնայ եւ դժուարութեամբ արձանագրած է հայ - չինական քաղաքական երկխոսութեան բարձր մակարդակին համար:

Նախագահ Քոչարեան յաջողութիւն մտղթելով դեսպանին՝ իր նոր առաքելութեան մէջ, յայտնած է, որ իր պաշտօնակառուցման ընթացքին երկկողմ յարաբերութիւններուն մէջ արձանագրուած է նկատելի յառաջընթաց:

## ՕԹԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Ճանաչողական այցելութեամբ վերջերս Հայաստան այցելած է ՕԹԱՆԻ միջազգային գիւնդի կառավարիչ շրջանային համագործակցութեան վարչութեան պետ գործ. Կուրիտ Փալմիէրիի գլխաւորած պատուիրակութիւնը: 5 Մարտին պատուիրակութիւնը այցելած է Հայաստանի գիւնդի ուժերու խաղաղապահ ստորաբաժնում, ծանօթացած է ստորաբաժնի մասին կազմաւորման եւ կազմակերպման խնդիրներուն:

6 Մարտին ՕԹԱՆԻ գիւնդի կառավարիչ պատուիրակութիւնը այցելած է Վազգէն Սարգսեանի անուն գիւնդի կառավարիչի, ուր ծանօթացած է Հայաստանի գիւնդի կառավարիչի փոխարէնը քարտեզը պատրաստութեան համակարգին:

## ՌՈՊԵՐԹ ՔՈԶԱՐԵԱՆ ԿԸ ՍՏՈՐԱԳՐԷ ՇԱՐՔ ՄԸ ՕՐԵՆՔՆԵՐ

7 Մարտին Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան ստորագրած է Ազգային ժողովի ընդունած «Տեղական հանրաքուէի մասին» օրէնքը, որ կը սահմանէ տեղական հանրաքուէի հասկացողութիւնը եւ կը կանոնակարգէ անոր կազմակերպման եւ կայացման հետ առնչուող հարցերը:

Նախագահը ստորագրած է նաեւ «Ձերբակալուած եւ կալանաւորուած անձերը պահելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներու պետական կենսաթոշակային ապահովութեան օրէնքին մէջ լրացում կատարելու մասին» օրէնքը:

## ԹՈՒՐԲ ԿԻՆԵՐ ԿԸ ՀՐԱԺԱՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՅԵԼԵԼԷ

Թուրք կիներու պատուիրակութիւն մը, որ Երեւան պէտք էր այցելել անցեալ Ուրբաթ, անորոշ ժամանակով յետաձգած է իր այցելութիւնը:

Թրքական «Մար» թերթը կը հաղորդէ, որ այցելութիւնը, որուն կազմակերպիչն է Թուրք-հայկական կիներու հարողակցութեան խումբը, յետաձգուած է Երեւանի խորհրդարանի կողմէ Հայկական Յեղափոխութեան ճանաչման բանաձեւին վերահաստատման պատճառով:

## ՔԱՐՈԶԶԱԿԱՆ ՕՐ՝ ՍԱՔՐԱՄԵՆԹՈՅԻ ՄԷՋ

Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը 20 փետրուարին Սաքրամենթոյի մէջ կազմակերպած է իր տարեկան քարոզչական օրը, որուն ընթացքին ամերիկացի օրէնսդիրներու եւ քաղաքագէտներու ներկայացուած է Հայկական հրատարակչական շարք մը:

Կլեմտէյլի շրջանի Ծեղաւտական Ճէք Սթաթս առաջարկած է Քալիֆորնիայի եւ Հայաստանի միջեւ անցեալ տարի ստորագրուած փոխըմբռնումային յարուստեանկան շարունակութիւն Երեւանի մէջ հիմնել քալիֆորնիական արտագրութիւններու առեւտուրի գրասենեակ: Այլ հարցերու շարքին քննարկուած են նաեւ Հայկական Յեղափոխութեան դասաւանդման եւ դասագիրքի պատրաստութեան վերաբերող հարցեր:

Ձեռնարկին մասնակցած են ամերիկահայեր Կլեմտէյլէն, Պրայմֆրէն, Լոս Անճելըսէն, Ֆրեզնոյէն, Սան Ֆրանսիսքոյէն եւ Սաքրամենթոյէն: Ներկայ եղած են նաեւ մեծ թիւով լրագրողներ:

## ԱՆԳԱՐԱ ԴԺԳՈՎ՝ ՊԱՔՈՒԷՆ

«Քասփիք» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ «Թուրք-ազրպէյճանական յարաբերութիւններուն մէջ կրնայ նոր ճգնաժամ մը ծագի»:

Վկայակոչելով կարգ մը դիւանագիտական աղբիւրներ՝ գործակալութիւնը կը նշէ, որ Անգարա Պաքուի յղած է շարք մը բողոքներ՝ կապալիքի ռատարի կեդրոնը Ռուսիոյ տրամադրելու առնչութեամբ:

Թրքական կողմին պնդումով, «Ազրպէյճանի կեցուածքը համահունչ է գործընկերութեան եւ եղբայրութեան ոգիին, եւ Ալիեւի վարչակազմը, նախքան ռատարի կայանը բուստրուս յանձնելը, պէտք էր խորհրդակցէր Անգարայի իշխանութիւններուն հետ»:

Միեւնոյն ժամանակ, ըստ նոյն աղբիւրին, Թուրքիոյ ղեկավարութիւնը յարուցած է այն իրողութիւնը, որ «Պաքու պատշաճ ձեւով չ'արձագանցեց Երեւանի խորհրդարանի կողմէ հայամէտ գեկուցագիրի ընդունման»:

## 140 ՀԱԶԱՐ ԹՈՒՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ԱՐԴԻՒՆԱՀԱՆՈՒՄ

Սոթքի ոսկիի հանքը անցեալ տարուան Դեկտեմբերէն վերսկսած էր հանքաքար արտադրել: Հանքի վերաօգտագործման առաջին հանգրուանի աշխատանքին, ըստ արդիւնաբերուած ծաւալներուն, կը մասնակցէին 140 գլխաւոր եւ 100 պահեստային հանքադործներ: Միջին աշխատավարձը այժմ կը կազմէ 180 տոլար:

Ըստ հանքի տնօրէն Արտուսազ Մովսիսեանի, այս տարուան ընթացքին պէտք է աւարտուի Ծարը՝ էջ 8

## ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻՆ ՄԷՋ

Գաղթականներու հարցերու նորվեկիական խորհուրդի հայաստանեան գրասենեակի օժանդակութեամբ Գեղարքունիքի մարզին գաղթականներով լեցած շրջաններուն մէջ կ'իրականացուին շինարարական ծրագիրներ:

Այսպէս Դարանակ գիւղին մէջ արդէն կառուցուած է դպրոցի նոր շէնք մը, որուն համար տրամադրուած է շուրջ 8500 տոլար:

Գրասենեակը անցեալ տարուան ընթացքին շրջանին մէջ իրականացուցած է շուրջ 50 հազար տոլարի հիմնական շինարարութեան եւ վերանորոգման աշխատանքներ: Մօտ 8500 տոլար արժողութեամբ շինանիւթ յատկացուած է Վանեան եւ Տորֆաւան գիւղերու միջնակարգ դպրոցին նորոգութեան համար: 22 հազար տոլարի ներդրում կատարուած է Գաւառի թիւ 6 միջնակարգ դպրոցին հրդեհէն վնասուած տարածքը եւ առաստաղը կառուցելու համար:

Գաղթականներու հարցերու նորվեկիական խորհուրդի տնօրէն Թիմոթի Սթրէյթը կատարուած աշխատանքներուն համաձայն գտնուելով՝ հաստատած է, թէ մարզին մէջ ներդրումները պիտի շարունակուին: Յայտնենք, նաեւ որ Դարանակ գիւղին մէջ տեղի ունեցած հանդիսութեան ընթացքին 11 գաղթականներ ստացած են Հայաստանի քաղաքացիութիւն:

## 1970 - 1980ԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԱՌՈՒՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԵՐԵՒԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՔԸ՝ ԽԵՂԱԹԻՒՐՈՒԱԾ

Ըստ Երեւանի գլխաւոր ճարտարապետ եւ փոխ քաղաքապետ Նարեկ Սարգսեանի, 1970 - 1980ական թուականներէն սկսած Երեւանի մէջ կատարուած է «քաղաքին ամբողջովին խորթ եւ օտար կառուցապատումը՝ առանց գեղագիտական չափանիշներու բաւարարման»: Ան նշեց, թէ այլ խնդիր է, որ այդ կառուցապատումը ինչ պատճառներով կատարուած է եւ քաղաքին այսօրուան ճարտարապետական խեղթիւրումները չեն կրնար աւելի մեծ վնաս հասցնել Երեւանին, քան ինչ որ եղած է այդ տարիներուն:

Ըստ գլխաւոր ճարտարապետին, պատմական, գեղարուեստական եւ գեղագիտական արժէքները գլխաւորաբար մայրաքաղաքի թմամանեանական կեդրոնին մէջ են, եւ այդ շրջանը տակաւին ամբողջովին կառուցապատուած չէ: Այդ կեդրոնին բակերը աղբանոցի վերածուած են, եւ քաղաքի իշխանութիւններուն հիմնական ծրագիրը ներկայիս այդ շրջանին բարեկարգումն է:

## ԿՐՕՆԻ ԳՈՐԾԵՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿՐՆԱՅ ԼՈՒԾՈՒԻԼ

«Երկիր» կը հաղորդէ, որ ըստ Հայաստանի կառավարութեան կողմէ շրջանառութեան մէջ դրուած որոշման նախագիծին, յառաջիկային կրնայ լուծուիլ Հայաստանի կառավարութեան առնթքեր կրօնի գործերու պետական խորհուրդը:

Հայ եկեղեցւոյ գործերը վարող պետական խորհուրդը ստեղծուած է 10 Նոյեմբեր 1943ին: 1975 - 1995 թուականներուն անիկա գործած է Հայաստանի խորհրդային Հանրապետութեան նախարարաց խորհուրդին առնթքեր, իսկ 1995 թուականէն մինչեւ Յունուար 2000, Հայաստանի վարչապետին որոշումով անիկա կը գործէ Հայաստանի կառավարութեան առնթքեր: Ունի երեք բաժին՝ տեղեկատուական - վերլուծական, հայ եկեղեցւոյ եւ կրօնական կազմակերպութիւններու հետ յարաբերութիւններու, իրաւաբանական ծառայութիւններու, ինչպէս նաեւ գործերու վարչութիւն:

Նախագիծին համաձայն, այս որոշումը տրուած է պետական կառավարման համակարգին մէջ բարեփոխումներ կատարելու եւ կարգ մը օրէնքներ իրականացնելու նպատակով: Ընձուող խորհուրդին գործերը պիտի վերապահուին Հայաստանի կառավարութեան աշխատակազմին: Պիտի ճշդուին նաեւ պետութիւն - եկեղեցի, եկեղեցի - հասարակութիւն, եկեղեցի - հասարակական կեանք, եկեղեցի - պետական կեանք յարաբերութիւնները:

## ԿՈՐԻԶԱՅԻՆ ԿԱՅԱՆ

## ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՈՒՄԻ ՊԻՏԻ ՎՃԱՐՈՒԻՆ

6 Մարտին Հայաստանի Ազգային ժողով - կառավարութիւնը հարցապնդումի նիստին ընթացքին, պատասխանելով Ազգային ժողովի Հ. Յ. Դ. պատգամաւորական խմբակցութեան անդամ Արմէն Ռուստամեանի մէջ հարցումին, Հայաստանի ուժանիւթի նախարար Արմէն Մովսիսեան ըսեւ, որ այս տարի Մեծամորի կորիզային կայանի անձնակազմին վճարման առումով ընթացիկ պարտքեր պիտի չառաջանան, իսկ նախկին պարտքերը պիտի փակուին:

Նախարարը նշեց, որ 4 ամսուան ընթացքին կորիզային կայանի անձնակազմին վճարուած է 5 ամսուան աշխատավարձը, եւ 2001 թուականի Դեկտեմբերէն ետք աշխատավարձի նոր պարտքեր չեն գոյացած:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐՈՒ ՆԱԽԱԳԻԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

5 Մարտին Հայաստանի խորհրդարանը սկսած է քննարկել Ազգային ժողովի խումբ մը պատգամաւորներու կողմէ ներկայացուած սահմանադրական նախագիծի տարբերակը, որ յստակօրէն կ'առաջադրէ երկքաղաքացիութեան իրաւունք տալ եւ շեշտը կը դնէ կառավարման խորհրդարանական դրութեան վրայ:

Վարդան Պողոսեանի կողմէ ներկայացուած նախագիծին համաձայն, իւրաքանչիւր հայ, որ մնայուն կերպով Հայաստանի մէջ կը բնակի, պէտք է ստանայ Հայաստանի քաղաքացիութիւն: Ըստ այլ յօդուածի մը, ոչ ոք կրնայ դատապարտուիլ կամ ենթարկուիլ մահապատիժի:

Յորենգէ խառատեանի ներկայացուցած կառավարման դրութեան առնչուող նախագիծին համաձայն, խորհրդարանը պէտք է ունենայ 101 պատգամաւոր՝ ընտրուած միայն համամասնական ընտրակարգով: Պատգամաւոր կրնան ընտրուիլ 21 տարիքը ամբողջացուցած եւ վերջին 4 տարին Հայաստանի քաղաքացիութիւն ունեցող մարդիկ: Ընտրական իրաւունք ունեցող առնուազն 50 հազար քաղաքացիներ իրաւունք ունին խորհրդարանը լուծելու պահանջ ներկայացնելու:

Յաջորդ բաժինով կառավարման ձեւի փոփոխութեամբ էական փոփոխութիւններու կ'ենթարկուին նաեւ Հայաստանի նախագահին տեղը պետութեան բարձրագոյն մարմիններու դրութեան մէջ, անոր լիազօրութիւններուն շրջանակը եւ փոխ յարաբերութիւնները խորհրդարանի եւ կառավարութեան հետ:

Ըստ նախագիծին, Հայաստանի նախագահը կ'ընտրուի ընտրողներու ժողովին կողմէ, որ բաղկացած կ'ըլլայ խորհրդարանի պատգամաւորներէ եւ անոնց թիւին հաւասար տեղական ինքնակառավարման մարմիններու ներկայացուցիչներէ:

Յաջորդ օրուան նիստին Շաւարշ Քոչարեան անդրադարձած է նախագիծի վերջին՝ «դատական իշխանութիւնը», «տեղական ինքնակառավարում», «կեդրոնական դրամատուր», «սահմանադրութեան ընդունումը եւ փոփոխութիւնը» գլուխներուն:

## ԷԶՄԱԾԻՆ

## ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԺՈՂՈՎ

4էն 6 Մարտին Ս. Էջմիածինի մէջ տեղի ունեցած է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կանոնադրութեան յանձնախումբի հերթական նիստը՝ յանձնախումբի նախագահ Վաչէ արք. Յովսէփեանի նախագահութեամբ:

Եւթուսայ նիստերուն ընթացքին կանոնադրութեան յանձնախումբը ամբողջութեամբ վերանայեցաւ կանոնադրութեան նախագիծը՝ թեմերէն ստացուած առաջարկներու հիման վրայ կատարելով անհրաժեշտ փոփոխութիւններ: Յառաջիկային մշակուած նախագիծը պիտի ներկայացուի Գարեգին Բ. կաթողիկոսի ուշադրութեան, ապա պիտի քննարկուի Գեղարքունի հոգեւոր խորհուրդին մէջ: Կանոնադրութիւնը վերջնականօրէն պիտի հաստատուի Ազգային եկեղեցական ժողովին կողմէ:

## ՉԱԻՆ ԵԴԻԳԱՐԵԱՆԻ ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ԹԱԻՐԻԶԻ ՄԷՋ

«Խաղաղութեան եւ բարեկամութեան երաժշտութիւն» նշանաբանով վերջերս Թաւրիզի մէջ կայացած է համերգաւար մը, որուն մասնակցած են նաեւ հայկական խումբեր, որոնց համերգները արժանացած են հարիւրաւոր հայ եւ օտար հանդիսականներու ջերմ ընդունելութեան:

Միւս կողմէ, Թաւրիզի մշակութային համալիրի դահլիճին մէջ, քաղաքի երաժշտական միութեան ու Արեւելեան Ատրպատական նահանգի մշակոյթի եւ իսլամական կողմնորոշման վարչութեան համագործակցութեամբ, տեղի ունեցած է հայազգի երաժիշտ Զաւէն Երիզարեանի մեծամասն երեկոն՝ «60 տարի հայ երաժշտութեան հետ»:

## ԿԻՊՐԱՆԱՅ ԿԵԱՆՔ

## ՎԱՐԴԱՆ ԹԱՇԾԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻ Ս. ՄԵՐՈՂ ՄԱՇՏՈՅԻ ԸՔԱՆԾԱՆՈՎ

Վերջերս Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիոյ մէջ կայացած Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի եզրափակիչ հանդիսութեան ընթացքին, կրթութեան եւ արուեստի մարզերուն մէջ իր կատարած ծառայութեան համար, սփիւռքահայ վաստակաւոր կրթական մշակ, տնօրէն, ընթացիկ, դերասան եւ արուեստագէտ վարդան Թաշճեան Արամ Ա. կաթողիկոսին կողմէ պարգևատրուած է Ս. Մերոյ Մաշտոցի շքանշանով: Պէյրութի ամերիկեան համալսարանէն շրջանաւարտ Վարդան Թաշճեան կրթական եւ մշակութային բեղուն գործունէութիւն տարած է Կիպրոսի եւ Լիբանանի մէջ: Ան մեծ համբաւ կը վայելէ իր բեւեղ ներկայութիւնը:










# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Ն



## ՆՇՍԱՐ

### ԿԱՐԴԱՅԷՔ ԱՅՍ ԽՄԲԱՆԿԱՐԸ...




Հ. Մ. Ը. Մ.ի լիբանանեան ընտանիքի անլի քան 75ամեայ պատմութեան ոսկեմատեանին մէջ, անմոռանալի յաղթանակներու շողջողուն բաժակներով Հ. Մ. Ը. Մ.ի կեանքին պայծառ էջերը հարստացուցած մեր պիտոյեան խումբերուն կողքին, թե՛ մօտիկ է թէ հեռուոր անցեալին, մի՛շտ ալ փայլած են Հ. Մ. Ը. Մ.ականի իրենց նկարագիրով, գիտակցութեամբ եւ դիմագիծով յատկանշուած տիպար մարզիկներ, որոնք Հ. Մ. Ը. Մ.ի պիտոյեանութեանց դարանը ճոխացուցած են անհատական մարզախաղերու մէջ արձանագրած իրենց յաղթական բաժակներով: Հեծելաբարձի, աթլետի, փինկ-փոնկի, կոփամարտի, մարմնամարզութեան եւ անհատական մլլ մարզախաղերու մէջ պատմական յաղթանակներ արձանագրած մեր մարզիկներն ու մարզիկուհիները Հ. Մ. Ը. Մ.ի դրօշը բարձր պահած են ո՛չ միայն տեղական, այլեւ՝ համաարաբական մարզական մրցումներու ընթացքին եւ արժանացած՝ նոյնիսկ մեր մրցակիցներուն բարձր գնահատանքին ու յարգանքին: Որովհետեւ մի՛շտ, ամենուրեք, Հ. Մ. Ը. Մ.ական մարզիկը դաշտ իջած է միւս մարզիկներէն տարբեր համոզումով, Հ. Մ. Ը. Մ.ականին միայն վայել կոչումով՝ անձնուրաց գաղափարապաշտութեամբ մը, որուն շնորհիւ իրենց անուններէն առաջ փայլած են Հ. Մ. Ը. Մ.ի դրօշն ու շապի

Հ. Մ. Ը. Մ.ԱԿԱՆ  
Շար.ը՝ էջ 10

### ՃԱՏՐԱԿ ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐՏԱԵՐՆԵՐՈՒ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

## ՄԵՂՐԻ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, ՀՐԱԿ ՓԱՓԱԶԵԱՆ ԵՒ ՄԱՐԻԱ ԹՈՍՈՒՆԵԱՆ՝ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ



Մեղրի Կիրակոսեան եւ Հրակ Փափազեան

Շարաքավերջի իրենց աւարտին հասան Լիբանանի 10էն, 12էն, 14էն եւ 16էն վար դասակարգերու ճատրակի տղոց եւ աղջկանց պիտոյեանութիւնները, որոնց իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի կրտսերներու կազմը:

Անցեալ Նոյեմբերին ի վեր մարզիչ եղբայր խաչիկ Մուրատեանի հսկողութեան տակ փորձեր կատարող Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերն ու եղբայրները հակառակ իրենց փորձառութեան պակասին, արձանագրեցին պատուաբեր արդիւնքներ:

Մինչեւ 10 տարեկան աղջկանց պիտոյեանութեան Մեղրի Կիրակոսեան 4 կէտ ապահովեց եւ հանդիսացաւ փոխ պիտոյեան: Նոյն դասակարգի տղոց մրցումներուն Արիկ Արրահամեան հանդիսացաւ 5րդ:

Մինչեւ 12 տարեկան դասակարգի աղջկանց մրցումներուն 3 կէտով Մարիա Թոսունեան հանդիսացաւ 3րդ: Տղոց մրցումներուն Հրակ Փափազեան 4,5 կէտով նոյնպէս գրաւեց 3րդ դիրքը: Արամ Կիրակոսեան եւ Ռոստոմ Տանակեօպեան ապահովեցին 4ական կէտ գրանցելով պատուաւոր դիրքեր դասաւորման առաջին տասնեակին մէջ:

### «ՉԵՄՓԻՆԸ ԼԻԿ»-Ի ՖՈՒԹՊՈՒՄ ՄՐՑԱՇԱՐՔ

## ՏԱՔ ՃԱԿԱՏՈՒՄՆԵՐ՝ Դ. ԽՄԲԱԿԵՆ ՆԵՐԱ

«Չէմփիրնկ Լիկ»ի ֆուտպոլի մրցաշարքին Բ. հանգրուանի դարձի նախափուլերին հանգրուանի մրցումներուն, այսօր տեղի կ'ունենան չորս ճակատումներ՝ Ա. եւ Բ. խմբակներէն ներս:

Գ. խմբակէն ներս այդքան ալ հետաքրքրական պիտի չըլլան մրցումները, քան՝ Դ. խմբակէն ներս տեղի ունենալիք մրցումները, որոնց ընթացքին Արեւնայ պիտի հիւրընկալէ Տեփոթիւ Քորունան, իսկ Պայէրն Լեւերքուզը՝ Եուլվենթուրը:

Իտալական կազմը պիտի փորձէ դժուարութիւններու դիմաց չգտնուիլ, նկատի ունենալով, որ անոր կազմին պիտի բացակային Էտկար Տաւիտեմ եւ Մարք Իուլիանո (կախակալուած):

Վաղը եւս տեղի պիտի ունենան հետաքրքրական երկու հանդիպումներ: Առաջինին, Մանչեսթըր Եունայթըտ պիտի հիւրընկալէ Պայէրն Միւնխը, իսկ երկրորդին, Պարսելունա՝ Լիվըրփուլը:

Պայէրն Միւնխը շատ հաւանաբար դժուարութիւններու առջեւ գտնուի, որովհետեւ մարզիչ Օթմար Հիցֆէլտ կը յայտնէ, թէ վիրաւորներու շարքին են Քարսթըն Եանքըր, Մեմմէթ Շոլ եւ Հասան Սալիհամիծիչ:

Իսկ «Նուրամփ»ի մէջ տեղի ունեցող մրցումին, սպանական կազմէն շատ հաւանաբար բացակայի Ռիվալտո, որ անցեալ շաբաթ Ռէալ Պեթիսի դէմ տեղի ունեցած մրցումին վիրաւորուած:

Ստորեւ՝ այսօրուան եւ վաղուան մրցումներուն յայտագիրը:

ԱՅՍՈՐ  
Գ. խմբակ  
Փորթո (Փորթուգալ)  
- Փանաթինայքոս (Յունաստան)  
Ռէալ Մատրիտ (Սպանիա) - Սփարթա Փրակա (Չեխիա)

Դ. խմբակ  
Արեւնայ (Անգլիա)  
- Տեփոթիւ Քորունա (Սպանիա)  
Պայէր Լեւերքուզըն (Գերմանիա) - Եուլվենթուր (Իտալիա)

ՎԱՂԸ  
Ա. խմբակ  
Մանչեսթըր Եունայթըտ (Անգլիա) - Պայէրն Միւնխը (Գերմանիա)  
Նանթ (Ֆրանսա) - Պոաւիսթա (Փորթուգալ)

Բ. խմբակ  
Պարսելունա (Սպանիա) - Լիվըրփուլ (Անգլիա)  
Ա. Էս. Ռոմա (Իտալիա) - Կայաթասարայ (Թուրքիա)

### ՊԱՍՔԵԹՊՈՒ

## ՔԱՅՐԱՊՈՒ - Յ.Մ.Ը.Մ.՝ 66 - 62

Երէկ երեկոյեան, Քահրապայի դաշտին վրայ (Չուք) տեղի ունեցաւ Քահրապա - Հ.Մ.Ը.Մ. առաջին մրցումը, որ վերջ գտաւ դաշտին տեղերուն յաղթանակով՝ 66 - 62 արդիւնքով (կիսախաղ՝ 45 - 28, ի նպաստ՝ Քահրապայի):

Երկու խումբերուն միջեւ երկրորդ ճակատումը տեղի կ'ունենայ վաղը՝ Չորեքշաբթի, Հ.Մ.Ը.Մ.ի «Թնճուկեան» մարզադաշտին վրայ, ժամը 20:00ին: Նշենք, թէ երեք մրցումէ երկու յաղթանակ արձանագրող խումբը կ'ապահովէ Ա. դասակարգին իր տոմարը:

### ՍԱԺԵՍ ԸԱՍԱԲ ԱՄԱՐՏԱԿԱՆԻՆ

Արեւմտեան Ասիոյ գօտիէն ներս տեղի ունեցող վտուժի մրցումներուն իր կատարած երրորդ եւ վերջին ճակատումին, Սաժէս 85 - 74 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Օրթոտոքսին (Յորդանան) գրաւեց խմբակին պարագլուխի դիրքը եւ այսպիսով ապահովեց աւարտական մրցումներուն իր տոմարը: Աւարտականի այս մրցումները տեղի պիտի ունենան Մալեպիոյ մէջ 28 Ապրիլէն 5 Մայիս:

Նշենք, թէ իր կատարած առաջին մրցումին, Սաժէս 128 - 73 արդիւնքով պարտութեան մատնած էր Քըրքը (Իրաք), իսկ երկրորդին՝ Չոպ Ահանը (Իրան), 100 - 88 արդիւնքով:

### ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒՄ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

## ՇԱՊԱՊ ՍԱՀԷԼ ԲԱՐՁՐԱՑՄԱԻ ՅՐԴ ԴԻՐՔ

Լիբանանի ֆուտպոլի պիտոյեանութեան 16րդ հանգրուանին, երէկ տեղի ունեցան երկու մրցումներ եւ այսպիսով 14 խումբերն ալ կատարած եղան 16ական մրցում:

10րդ դիրքը գրաւող Անսար, կրեց եղանակի իր 7րդ պարտութիւնը՝ Շապապ Սահէլէն, 1-0 արդիւնքով, մրցումին նշանակեց իրաքցի Մահմուտ Մաժիտ (Ա. կիսախաղին): Իր արձանագրած այս յաղթանակէն ետք Սահէլ 5րդ դիրքէն բարձրացաւ 3րդ դիրք, երկու կէտով գերապանցելով Թատամուն Սուր:

Կոլեկով հարուստ մրցումէ մը ետք վերջ գտաւ Պըրժ - Սաֆա մրցումը ի նպաստ՝ առաջինին, 4-3 արդիւնքով: Պըրժի կողմը նշանակեցին Տարիմկըն, Ապպէս Աթուէ եւ Հըսէյն Թահհան (2 կոլ), իսկ Սաֆայի կողմը՝ Մարիս Պիաթէք (2 կոլ) եւ Նըսուր Սալայէ: Իր արձանագրած այս յաղթանակէն ետք Պըրժ 8րդ դիրքէն բարձրացաւ 7րդ դիրք:

Ստորեւ՝ դասաւորումը.

ԽՈՒՄԲ	Մ.	Յ.	Պ.	Ն.	Ս.	ԿԷՏ
1.- Սաժէս	16	12	3	1	37	22 39
2.- Նըժմէ	16	11	4	1	40	13 37
3.- Շ. Սահէլ	16	10	3	3	28	16 33
4.- Թ. Սուր	16	8	7	1	31	13 31
5.- Սալամ	16	9	3	4	29	14 30
6.- Սաֆա	16	8	3	5	30	22 27
7.- Պըրժ	16	7	4	5	29	25 25
8.- Ախա	16	7	2	7	19	23 23
9.- Ահո	16	5	6	5	21	22 21
10.- Անսար	16	4	5	7	17	22 17
11.- Հ. Մ. Մ.	16	2	4	10	17	33 10
12.- Ա. Սալայ	16	2	2	12	14	37 8
13.- Հ. Մ. Ը. Մ.	16	-	4	12	13	32 4
14.- Ռասիմկ	16	-	4	12	10	41 4

### ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒՄ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔ

## ՓԱՐԻՉ ՍԷՆ ԺԵՐՄԵՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՑ

Ֆրանսայի ֆուտպոլի բաժակի մրցաշարքի քառորդ աւարտականի մրցումներուն, Փարիզ Սէն Ժերմէն իր դաշտին վրայ 1-0 արդիւնքով պարտութեան մը կրելէ ետք Լորիանէն, դուրս մնաց մրցաշարքէն:

Անցեալ շաբաթ, նոյն այս դաշտին վրայ, մայրաքաղաքի կազմը 1-0 արդիւնքով պարտութեան մը կրելէ ետք Պարտոյէն՝ Ֆրանսայի ֆուտպոլի լիկայի բաժակի մրցաշարքի կիսաաւարտականին, դուրս մնացած էր մրցաշարքէն: Սետիք Շապիլ նշանակեց Լորիանի եւ մրցումին «որբ» կոլը (32րդ):

Պասթիա դժուարութեամբ պարտութեան մատնեց Գ. դասակարգին մաս կազմող Լիպուրն - Սէն - Սէօրիլը, յետ երկարաձգման, 1-0 արդիւնքով: Պասթիայի եւ մրցումին «որբ» կոլը նշանակեց Թոնի Վիլի (110րդ):

Արտան իր դաշտին վրայ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Բ. դասակարգի Ռասիմկ Սթրասպուրկը, շնորհիւ՝ Լուուոլիչ Աստուրի նշանակած կողին (79րդ):

Վերջապէս չորրորդ եւ վերջին մրցումին, Մոնաքո, որ Բ. դասակարգին մաս կազմող Նիլի հիւրն էր, փենայթիկներով՝ 3-1 պարտուելէ ետք անկէ դուրս մնաց մրցաշարքէն: Մրցումին 120 վայրկեանները վերջ գտան 1-1 արդիւնքով:

### ՍՊԱՆՈՅ ՖՈՒԹՊՈՒՄ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

## ՊԱՐՍԵԼՈՆԱ ԿՐԵՑ ԵՂԱՆԱԿԻ ԻՐ ՅՐԴ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Սպանիոյ ֆուտպոլի պիտոյեանութեան 29րդ հանգրուանի մրցումներուն, Ռէալ Պեթիս - Պարսելունա սպասուած ճակատումը վերջ գտաւ հիւրընկալ կազմին յաղթանակով, որ 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը, շնորհիւ՝ Տէնիի նշանակած երկու կոլերուն (3րդ եւ 78րդ), Պարսելունայի կոլը նշանակեց Իթո (55րդ՝ սիւսիմամբ իր բերդէն ներս): Այսպիսով, Պարսա կրեց եղանակի իր 4 պարտութիւնը:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք Պեթիս բարձրացաւ 3րդ դիրք, մէկ կէտով գերապանցելով Տեփոթիւ Քորունան, որ 1 - 1 արդիւնքով հաւաստութիւն մը արձանագրելէ ետք վերջին դիրքը գրաւող Ռայո Վալեքանոյի հետ, նահանջեց 4րդ դիրք: Ուոլթըր Փանտիանի նշանակեց Լա Քորունայի կոլը (9րդ), իսկ Էլվիր Պոլիչ՝ Վալեքանոյի կոլը (35րդ): Հիւրընկալ կազմը մրցումը աւարտեց տասը մարզիկով, Սեպարի դաշտէն վտարումէն ետք (15րդ):

Պարագլուխի դիրքը գրաւող Վալենսիա 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Սեւիլլան, շնորհիւ՝ Խուան Սանչէսի (65րդ) եւ Միկել Անիելի Անկիլոյի (89րդ) նշանակած կոլերուն, մրցումը սակայն վերջ գտաւ իւրաքանչիւր խումբէն մէկական մարզիկի դաշտէն վտարումով: Սեւիլլային կարմիր քարտ ստացաւ Վիքթոր Սալաս (77րդ), իսկ Վալենսիային՝ նոյնիսկ Անկիլո (90րդ):

Ռէալ Մատրիտ (2րդ) 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Վիարէալը, շնորհիւ՝ Ռաուլ Կոնչալէսի (14րդ), Ֆենանսուսո Հիերոնի (60րդ՝ փենայթիկով) եւ Սթի Մաքմանմանի (65րդ) նշանակած կոլերուն:

Ստորեւ՝ 29րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Էսպանիոլ - Աթ. Պիլայաս	2 - 0
Մալալկա - Ռէալ Սարակոսա	2 - 1
Մայորքա - Օսաունա	4 - 2
Վալենսիա - Սեւիլլա	2 - 0
Ռ. Վալատոլիտ - Սելթա Վիլո	2 - 4
Ռէալ Սոսիէտատ - Թեներիֆ	0 - 2
Տեփ. Քորունա - Ռ. Վալեքանո	1 - 1
Ռէալ Պեթիս - Պարսելունա	2 - 1
Ռէալ Մատրիտ - Վիարէալ	3 - 0

ԴԱՍԱԲՈՐՈՒՄ	ԿԷՏ
1.- Վալենսիա	53 (35 - 22)
2.- Ռէալ Մատրիտ	52 (56 - 31)
3.- Ռէալ Պեթիս	49 (34 - 25)
4.- Տեփոթիւ Քորունա	48 (42 - 34)
5.- Պարսելունա	46 (48 - 28)
.....	.....
18.- Թեներիֆ	31 (24 - 39)
19.- Ռէալ Սոսիէտատ	30 (35 - 43)
20.- Ռայո Վալեքանո	29 (34 - 46)

### ԱՆԳԼԻԱ. ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔ

## ՉԵԼՍԻ ԾԱՆՐ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՑ ԹՈԹԵՆՅԱՄԸ

Անգլիոյ ֆուտպոլի բաժակի մրցաշարքի քառորդ աւարտականի մրցումներուն, Չելսի 4-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնելէ ետք Թոթեմհամը, ապահովեց կիսաաւարտական մրցումին իր տոմարը: Չելսի Ա. կիսախաղին 1-0 արդիւնքով յաղթեց, շնորհիւ՝ Նոյի Ուիլիզի (35րդ), Սիլուր Նեմէթի (37րդ) եւ Փոլ Իսսի (42րդ) նշանակած կոլերուն:

Սիւրբիպորո 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Էվըրթընը, շնորհիւ՝ Նոյի Ուիլիզի (35րդ), Սիլուր Նեմէթի (37րդ) եւ Փոլ Իսսի (42րդ) նշանակած կոլերուն:

Նիւքեմը - Արսենալ մրցումը, որ 51 հազար համակիրներու ներկայութեան վերջ գտաւ 1-1 արդիւնքով, դարձաւ եւս պիտի կրկնուի: Էտոն նշանակեց Արսենայի կոլը (14րդ), իսկ Լորան Ռոպերտ Նիւքեմը կոլը (52րդ):

Քառորդ աւարտականի չորրորդ եւ վերջին մրցումը, որ տեղի ունեցաւ Ռիսթ Պրոնուիչի (Ա. դասակարգ) եւ Ֆուլհէմի միջեւ, վերջ գտաւ այս վերջին յաղթանակով՝ 1-0 արդիւնքով: Սթի Մարլէ նշանակեց մրցումին «որբ» կոլը (47րդ):

